ՎՐԱՍՏԱՆԻ ԸՆՏՐԱՆԻՆ 2003թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Կարեն Վերանյան

2004թ. նոյեմբերին լրացավ Վրաստանում 2003թ. իշխանափոխության մեկ տարին, որը համընկավ Վրաստանի նախագահ Մ.Սահակաշվիլու «Ազգային շարժում» և վարչապետ Զուրաբ Ժվանիայի «Ժողովրդավարներ» կուսակցությունների պաշտոնական միավորման հետ: Երկու կուսակցություններն էլ, գտնվելով Վրաստանի նախկին ղեկավարության (ի դեմս Էդ. Շևարդնաձեի) ընդդիմության շարքերում, վճռորոշ մասնակցություն են ցուցաբերել 2004թ. մարտի 28-ին կայացած խորհրդարանական ընտրություններին միասնական՝ «Ազգային շարժում-ժողովրդավարներ» դաշինքի կազմով: Վրաստանի ընտրանին մեկ անգամ չէ, որ հնչեցրել է այդ կուսակցությունների միավորման անհրաժեշտության միտքը, որն ի վերջո կյանքի կոչվեց միայն մեկ տարի անց: Իշխանության թևերի միավորումը, սակայն, չկարողացավ կանխել ընտրանում առկա ներիշխանական հասունացող խնդիրները, իսկ նախկին վարչապետ Զուրաբ Ժվանիայի մահվամբ փաստորեն տապալվեց *Սահակաշվիլի-Բուրջանաձե-Ժվանիա իշխանական եռյակը*: Ավելին, քաղաքական հարթակից Ժվանիայի հեռացմամբ թուլացան Բուրջանաձեի դիրքերը, երկրում հաստատվեց կառավարման *խիստ* նախագահական համակարգ, որը վրացի քաղաքական գործիչներից ոմանք անվանում են նախագահական դիկտատուրա:

Վրաստանի ներքաղաքական իրադրության շուրջ

Խոշոր հաշվով «Ազգային շարժման» և «Ժողովրդավարների» միավորումը հետապնդում էր երկու նպատակ. նախ՝ բավական ուժեղացել էին Մ.Սահակաշվիլու և Զ.Ժվանիայի միջև եղած հակասությունները, և կուսակցությունների միավորումը փորձ էր կանխելու ներքաղաքական հավանական պառակտումները, ինչն այդքան անհրաժեշտ էր գործող ղեկավարության համար, երկրորդ՝ կուսակցությունների միավորումը Վրաստանի հասարակությանը վստահություն կներշնչեր իշխանությունների նկատմամբ:

Երկու բարձրաստիճան ղեկավարների միջև առկա հակասություններն առավել դրսևորվեցին Վրաստանի կառավարությունում իրականացված 2004թ. դեկտեմբերյան կադրային վերադասավորումների ընթացքում, որոնք նաև ուղղված էին Ժվանիայի դիրքերի թուլացմանը: Կադրային փոփոխություններից առանցքային պետք է համարել հատկապես երկրի նախկին գլխավոր դատախազ և ներքին գործերի նախարար Իրակլի Օկրուաշվիլու՝ պաշտպանության նախարարի պաշտոնին նշանակվելը: Երեսնամյա Օկրուաշվիլին դասվում է Վրաստանի այն քաղաքական գործիչների շարքին, որոնք առավել հակառուսական են, անզիջող ու ագրեսիվ քաղաքականության կողմնակից: Ավելին, 2004թ. օգոստոսին վրաց-հարավօսական հակամարտության ընթացքում Ջավայի բար-

ձունքներում վրացական կողմի կրած անհաջողությունները հիմնականում արդյունք էին հենց պաշտպանության նորանշանակ նախարարի նախաձեռնած գործողությունների:

Սահակաշվիլու և Օկրուաշվիլու մտերիմ հարաբերությունները նոր երևույթ չեն. դեռևս Էդ.Շևարդնաձեի իշխանության օրոք, երբ Վրաստանի ներկայիս նախագահը զբաղեցնում էր արդարադատության նախարարի պաշտոնը, Օկրուաշվիլին նրա տեղակալն էր: Վերլուծաբաններից շատերն են կիսում այն կարծիքը, թե վերջինս, երկրի ներքաղաքական դաշտում քաղաքական ազդեցիկ կերպար լինելով, զգալի ազդեցություն ունի Մ.Սահակաշվիլու վրա: Նրա շուրջ հավաքվել են այնպիսի քաղաքական գործիչներ, ինչպիսիք են, օրինակ, երկրի խորհրդարանի պաշտպանության և անվտանգության հարցերով հանձնաժողովի նախագահ Գիվի Թարգամաձեն, գլխավոր դատախազ Զուրաբ Ադեիշվիլին և այլոք (սոցիոլոգիական հարցման տվյալներով, Ի.Օկրուաշվիլին Մ.Սահակաշվիլուց և օլիմպիական չեմպիոն Զուրաբ Զվիադաուրուց հետո երրորդ ամենահայտնի վրացին է[1]):

Կադրային փոփոխություններ կատարվեցին երկրի պետանվտանգության համակարգում: Ներքին գործերի և պետանվտանգության նախարարությունների լուծարմամբ ստեղծվեց նոր գերատեսչություն՝ ներքին գործերի նախարարությունը, որն այսուհետ ղեկավարելու է Սահակաշվիլու վստահելի համախոհներից մեկը՝ Վանո Մերաբիշվիլին:

Այսպիսով, վերջինիս և Օկրուաշվիլու նշանակումներով երկրի նախագահը կարողացավ առժամանակ ամրապնդել դիրքերը ընտրանում՝ լիակատար վերահսկողություն հաստատելով պետության ուժային կառույցների վրա: Իսկ նախկին պաշտպանության նախարար Գեորգի Բարամիձեն, որը հարում է վարչապետ Զ.Ժվանիայի թևին (դեռևս 1990թ. ձևավորված «Վրաստանի կանաչների կուսակցության» հիմնադիրների շարքում էին Զ.Ժվանիան և Գ.Բարամիձեն), նշանակվեց եվրաատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով պետնախարար, ինչը իրականում նշանակում էր վերջինիս քաղաքական ազդեցության թուլացում: Քաղաքական փորձագետներից (այդ թվում և վրացի) շատերի կարծիքով, Մ.Սահակաշվիլու մտերիմ Իրակլի Օկրուաշվիլուն և վարչապետի թևի ներկայացուցիչ Գեորգի Բարամիձեին առնչվող կադրային նոր նշանակումները վկայում էին Ժվանիայի թևի թուլացման մասին:

2005թ. սկիզբը նշանավորվեց Իրակլի Օկրուաշվիլու և Գեորգի Բարամիձեի միջև տարաձայնություններով: Խնդիրն այն է, որ պաշտպանության նորանշանակ նախարարը նախաձեռնեց երկրի ռազմական տեսչությունում կաշառակերության դեպքերի հետաքննության գործընթացը, և, որ ամենակարևորն է, կասկածյալների թվում էր, ըստ որոշ աղբյուրների, նաև ուժային տեսչության նախկին նախարարը՝ Գեորգի Բարամիձեն: Թեև սույն թվականի հունվարի 4-ին Օկրուաշվիլու կողմից պաշտոնապես հայտարարված մեղադրվող

[1] http://volga.vlasti.net/index.php?Screen=news&id=88628, «Саакашвили стал грузинским человеком года», 04.01.2005.

բարձրաստիճան պաշտոնյաների ցանկում Բարամիձեի անունը չէր հիշատակվել, այդուհանդերձ, վերջինս բավական մտահոգված էր նման զարգացումներով: Երկու նախարարների միջև հակասություններն այնքան էին սրվել, որ գործին անհապաղ միջամտեց նաև երկրի նախագահը: Վերջինս հանդիպեց Օկրուաշվիլու և Բարամիձեի հետ, որին ներկա էր նաև երկրի նախկին վարչապետ Զ.Ժվանիան: Թեև Սահակաշվիլուն հաջողվեց հաշտեցնել երկու բարձրաստիճան պաշտոնյաներին, այնուամենայնիվ, այդ հակասությունները, ըստ էության, երկրի ընտրանում առկա իրադրության ընդամենը մի դրվագն էին:

Օկրուաշվիլի-Բարամիձե հակասությունների հետ կապված, ըստ որոշ աղբյուրների, պաշտպանության նորանշանակ նախարարը նախապես չէր համաձայնեցրել իր քայլերը Սահակաշվիլու հետ: Ընդհանրապես հարկ է նշել, որ Օկրուաշվիլին, հավատարիմ իր անզիջող հոգեկերտվածքին, ձգտել է ի սկզբանե ամրապնդել սեփական դիրքերը նոր ստանձնած պաշտոնում: Ինչևէ, նշենք, որ եթե Օկրուաշվիլին նույնիսկ չէր էլ համաձայնեցրել իր ծրագրերը Սահակաշվիլու հետ (հանգամանք, որ վկայում է նորանշանակ նախարարի *քաղաքական կամային ինքնուրույնության*, նրա նկատմամբ երկրի նախագահի «հատուկ վերաբերմունքի» մասին), այդուհանդերձ, տպավորությունն այնպիսին էր, որ ստեղծված տարաձայնությունները, թերևս, այնքան էլ անսպասելի չէին Սահակաշվիլու համար:

Տարբեր լրատվամիջոցներում լուրեր հայտնվեցին Սահակաշվիլի-Օկրուաշվիլի և Ժվանիա-Բուրջանաձե քաղաքական թևերի հետագա հավանական պառակտումների ուժեղացման, ըստ որոշ տվյալների՝ Օկրուաիշվիլու վարչապետի պաշտոնում նշանակվելու հավակնությունների մասին:

Այսպիսով, ակնհայտ էր, որ Վրաստանի կառավարությունում իրականացված կադրային փոփոխություններն ուղղված էին երկրի ընտրանում ազդեցությունների վերադասավորմանը, դիրքերի ամրապնդմանը: Դրանք, առաջին հերթին, միտված էին ուժեղացնելու Սահակաշվիլու իշխանական լծակները և միաժամանակ թուլացնելու Ժվանիա-Բուրջանաձե տանդեմը: Վրաստանի կառավարությունում առկա տարաձայնությունները, ինչ խոսք, բացասաբար անդրադարձան երկրի ղեկավարության հեղինակության վրա:

Վրաստանում վերջին ամիսների ներքաղաքական զարգացումներն ամփոփ և միաժամանակ ճշգրիտ պատկերացնելու համար անհրաժեշտ է դրանք դիտարկել նաև Վրաստան-ԱՄՆ-ԵՄ-Ռուսաստան հարաբերությունների համատեքստում:

Պաշտոնական Վաշինգտոնը բազմիցս ողջունել է Սահակաշվիլու նախաձեռնությունները, օրինակ՝ աջարական ճգնաժամի կարգավորումը, սակայն այստեղից չի հետևում, թե ԱՄՆ կառավարությունը անհարթություններ չունի Վրաստանի նախագահի հետ: Ըստ ամենայնի, պաշտոնական Վաշինգտոնը, որպես այլընտրանք Սահակաշվիլուն, ակտիվ աշխատանքներ էր սկսել նաև Զ.Ժվանիայի հետ: Հանգամանք, որը, բնակա-

նաբար, այնքան էլ դրականորեն չէր ընդունվում Մ.Սահակաշվիլու կողմից։ Պատճառներից մեկը Սահակաշվիլու խառնվածքն էր. համեմատաբար տաքարյուն է և զգացմունքային, հաճախ է դիմում անհավասարակշիռ քայլերի (օր., վրաց-հարավօսական հակամարտության գոտում վրացական կողմի կրած անհաջողությունները)։ Ի հավելումն՝ որոշ տեսակետների համաձայն, Սահակաշվիլին ամերիկյան ռազմավարությունում զուտ անցումային կերպար է հանդիսանում։

Վերլուծաբանների մի մասն անմիջական կապ է տեսնում երկրի նախագահի և նախկին վարչապետ Զ.Ժվանիայի միջև առկա տարաձայնությունների և 2004թ. դեկտեմբերի 5-ին վերջինիս՝ Միացյալ Նահանգներ կատարած մեկշաբաթյա պաշտոնական այցի միջև։ Վաշինգտոնում նա հանդիպումներ ունեցավ ԱՄՆ պետքարտուղարության բարձրաստիճան ղեկավարության, կոնգրեսականների, Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի ղեկավարության հետ։ Այցի ընթացքում նախատեսվում էր քննարկել պաշտպանության և անվտանգության ոլորտներում համագործակցության նախագծերի, Վրաստանի ժողովրդավարական ու տնտեսական բարեփոխումների ծրագրերի, Վրաստանին տրամադրվող ամերիկյան ֆինանսական օգնության վերաբերյալ հարցեր։ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի ղեկավարության հետ հանդիպումները նվիրված էին Վրաստանին հատկացվող օգնության ծավալների մեծացման վերաբերյալ հարցերին։ Մասնավորապես, Զ.Ժվանիան, համաձայն որոշ տվյալների, փորձեց Մ.Սահակաշվիլուն ցույց տալ, թե բավական լուրջ հենարան ունի Միացյալ Նահանգներում։ Ասում են, թե ԱՄՆ-ում նրան համակրում էին ԱՄՆ վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ Մադլեն Օլբրայթը (ըստ որոշ աղբյուրների, վարչապետին զգալի աջակցություն էր ցուցաբերում նաև ԱՄՆ-ում գործող հայկական համայնքը՝ կապված նրա հայկական արմատների հետ)։ Բավական ուշագրավ էր նաև այն, որ Միացյալ Նահանգներում Ազգային-ժողովրդավարական ինստիտուտը Վրաստանի վարչապետին պարգևատրեց Հարիմանի մրցանակով։ ԱՄՆ կառավարությունը մեծ նշանակություն էր տալիս Զ.Ժվանիայի այցին։ Վերջինս, իր հերթին, զգալի աջակցություն էր ստացել պաշտոնական Վաշինգտոնից։ Մամուլում նույնիսկ լուրեր տարածվեցին, թե ամերիկյան ֆինանսական օգնությունը կապահովվի միայն այն դեպքում, եթե վարչապետի պաշտոնը շարունակի զբաղեցնել հենց Զ.Ժվանիան։

Զ.Ժվանիայի մահից հետո երկրի նորակազմ կառավարության ղեկավարի պաշտոնին նշանակվեց նրա մտերիմ անձանցից մեկը՝ Զուրաբ Նոգաիդելին։ Ինչպես և սպասվում էր, Սահակաշվիլին ձգտում էր երկրի վարչապետի պաշտոնին տեսնել մի այնպիսի քաղաքական գործչի, որը քաղաքական տեսանկյունից ազդեցիկ կերպար չէ և չի կարող իր շուրջը համախմբել երկրի քաղաքական հեղինակություններին։ Այս առումով Սահա-

կաշվիլու կողմից Զ.Նոգաիդելու թեկնածության առաջադրումն ամբողջովին համահունչ էր երկրի իշխանական այս թևի ներքին քաղաքականությանը: Պատահական չէր, որ Նոգաիդելու թեկնածությանը բացահայտ կերպով համաձայն չէր Վրաստանի խորհրդարանի նախագահ Նինո Բուրջանաձեն:

Հասկանալի է, որ երկրի քաղաքական թատերաբեմից Ժվանիայի հեռացումից հետո բավականին թուլացել են նաև Բուրջանաձեի դիրքերը, և երկրի ներքաղաքական դաշտում նոր թևի առաջացումը կարող էր հավասարակշռող դեր խաղալ ի հակակշիռ Սահակաշվիլու, ինչու չէ՝ նաև պահպանել իր ազդեցությունը: Հանգամանք, ինչը չի կարելի ասել Նոգաիդելու նշանակման կապակցությամբ, որն ավելի շուտ «տեխնիկական» վարչապետ է, ինչպես վերլուծաբաններից շատերն են նշում: Ավելին, երկրի նորակազմ կառավարությունում իր դիրքերը պահպանեց Իրակլի Օկրուաշվիլին (վերահաստատվեց երկրի պաշտպանության նախարարի պաշտոնում), իսկ հակադիր թևի ներկայացուցիչ Գեորգի Բարամիձեն, որը ժամանակին զբաղեցնում էր Ժվանիայի գլխավորած կառավարության փոխվարչապետի պաշտոնը, ազատվեց այդ պաշտոնից[1]:

Կարելի է ասել, որ ներկայում Վրաստանի քաղաքական դաշտը գործում է գլխավորապես երկրի նախագահ Սահակաշվիլու և նրա թիմակիցների, առաջին հերթին՝ Օկրուաշվիլու, ազդեցության ու վերահսկողության ներքո՝ բավական թույլ ընդդիմադիր դաշտի առկայության պայմաններում: Այդ առումով ուշագրավ է, օրինակ, որ Ժվանիայի մահվան հետ կապված՝ երկրի ընդդիմադիր դաշտը լուրջ ակտիվություն, թերևս, չցուցաբերեց:

Հետևություններ

Զ.Ժվանիայի մահվամբ Վրաստանի քաղաքական դաշտում զգալի խնդիրներ են առաջացել, քանի որ նախկինում վարչապետը կարողանում էր պահպանել Վրաստանի քաղաքական դաշտի հավասարակշռությունը: Բացի այդ, Ժվանիան երկրի այն քաղաքական գործիչներից էր, որոնք վարում էին համեմատաբար մեղմ դիվանագիտություն: Կարելի է ենթադրել, որ Ժվանիայի մահվան արդյունքում Վրաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը, թերևս, կդառնա առավել միանշանակ, է՛լ ավելի կսրվեն ռուս-վրացական հարաբերությունները, ինչը հավելյալ լարվածություն կառաջացնի Վրաստանի ներքաղաքական դաշտում:

Սահակաշվիլու թիմակիցներից, ըստ ամենայնի, իր ազդեցությունը կուժեղացնի Իրակլի Օկրուաշվիլին: Կարելի է ասել, որ վերջինս առաջին հերթին կփորձի մեծացնել իր ազդեցությունը երկրի ռազմական տեսչությունում: Պաշտպանության նախարարությունում ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանեցմանն ուղղված բարեփոխումները,

[1] Բարամիձեն շարունակում է հանդիսանալ եվրաինտեգրման հարցերով պետնախարար:

որոնք ենթադրում են ոլորտում կադրերի կրճատումներ, Օկրուաշվիլու համար սեփական ազդեցության լծակներն ուժեղացնելու պատեհ առիթ կարող են ծառայել: Այս առումով, ըստ որոշ աղբյուրների, ուշագրավ է Օկրուաշվիլու պահանջով 2005թ. փետրվարի կեսերին երկրի Գլխավոր սպայակույտի բարձրաստիճան ներկայացուցիչների (գեներալների) պաշտոնանկության փաստը: Ըստ որոշ տեղեկությունների, պաշտպանության նախարարը ձգտում է ազատվել խորհրդային ռազմական բարձրաստիճան կադրերից, հանգամանք, որի պատճառը նաև Օկրուաշվիլու հակառուսական տրամադրություններն են[1]:

Հավանական է, որ որոշ ժամանակ անց նախագահ Սահակաշվիլին երկրի քաղաքական դաշտում իշխանական ազդեցության ու հեղինակության առումով, թերևս, կարող է լուրջ խնդիրներ ունենալ Իրակլի Օկրուաշվիլու հետ: Վերջինս, ամենայն հավանականությամբ, ձգտելու է առաջիկա տարիներին հնարավորինս ամրապնդել ազդեցությունը երկրի ներքաղաքական դաշտում: Այդ առումով ուշագրավ է, որ ս.թ. մարտի սկզբներին Թբիլիսիում անգամ լուրեր էին պտտվում Ի.Օկրուաշվիլու և ՆԳ նախարար Վանո Մերաբիշվիլու միջև ծագած տարաձայնությունների շուրջ, թեև մարտի 14-ին վերջինս «Ռուսթավի 2» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում հերքեց նման տեղեկությունները՝ Օկրուաշվիլուն անվանելով իր «մտերիմ ընկերը»[2]:

[1] Պետք է հավելել նաև այն հանգամանքը, որ Վրաստանում, հատկապես ռազմական բնագավառում, ակտիվ կերպով ընթանում են ամերիկյան տիպի համակարգերի ստեղծման աշխատանքներ՝ համապատասխան կադրային քաղաքականությամբ: Ի դեպ, վրացական որոշ լրատվամիջոցներ գրեցին, թե պաշտոնից ազատված ռազմական ներկայացուցիչների շարքում էին նաև երկրի ԶՈՒ Գլխավոր սպայակույտի պետ Վախթանգ Կափանաձեն (որին փոխարինեց Լևան Նիկոլեիշվիլին), Վրաստանի ծովային պաշտպանության ուժերի հրամանատար Զազա Էրկվանիան և այլոք:

[2] Ըստ որոշ աղբյուրների, Իրակլի Օկրուաշվիլու և Վանո Մերաբիշվիլու միջև առկա տարակարծությունները ի հայտ եկան ս.թ. մարտի կեսերին՝ Շիդա Քարթլի շրջանի ոստիկանության ղեկավարությանը մաքսանենգության մեջ մեղադրանքի պատճառաբանությամբ պաշտոնից ազատելու գործընթացի հետ կապված: Խնդիրն այն է, որ Մերաբիշվիլին ներգրավվեց վերոնշյալ շրջանի ոստիկանության աշխատակիցների գործունեության հետաքննությանը, որոնց դեռևս 2004թ. նշանակել էր Օկրուաշվիլին, երբ գլխավորում էր երկրի ՆԳ նախարարությունը: